ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՇԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նշավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նշավան, (098) 937162, (096) 389225, nshavan18@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 18 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Նշավան համայնքի 2017թ-ի համար տեղական տուրքերը և վճարները համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Նշավան համայնքի ավագանու 30 նոյեմբերի 2016 թվականի <<Նշավան համայնքի տեղական տուրքերը և վճարները սահմանելու մասն>> թիվ 18-Ն որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ
2. ԲԱԲԱՅԱՆ ԼԵՈՆԻԿ
3. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԵՐԵՄ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԹՈՒՐ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ
6. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՁԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՊԱՊ ՀԱԿՈԲՅԱՆ**

Հավելված
Նշավան համայնքի ավագանու
31.01.2017թ. թիվ 6 որոշման

ՆՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմական շինությունների (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201քմ-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ
- 501քմ-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ
- 1001քմ-ի մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ
- 3001քմ և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ

գ) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազարդրամ
- 20քմ և ավելի մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային

չափերն ընդլայնող այլ կառույցներ (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքու շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ:

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ:

6) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ:

- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ.

- 51-ից մինչև 100 քմ մետր ընդհանու մակերես ունեցով հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ.

- 101-ից մինչև 200 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ.

-201-ից մինչև 500 քմ մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ.

-501 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունվեց հազար դրամ.

բ. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ.

- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ:

- 51-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ:

- 101-ից մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ:

- 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ:

- 501 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունվեց հազար դրամ:

7) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 1քմ համար երեք հարյուր հիսուն դրամ.

8) Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 % չափով.

զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

Բոլոր դրույքաչափերի համար կիրառել 0.5 գործակիցը:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հարյուր դրամ:

2) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հարյուր դրամ.

3) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթներ և աճուրդներ մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հարյու դրամ:

4) Աղբահանության վճար՝յուրաքանչյուր անձի համար ամեն ամիս 20 դրամ:

Համայնքի ղեկավար Պ. Հակոբյան